

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

«Исторические связи и дружба украинского и армянского народов».
Сборник материалов второй украинско-армянской научной сессии,
Киев, 1965, 183 стр., цена 92 коп.

«Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերն ու բարեկամությունը»: Ուկրաինա-հայկական գիտական երկրորդ սեսիայի նյութերի ժողովածու, Կիև, 1965, 183 էջ, գինը 92 կոպ.:

1962 թ. նոյեմբերին Կիևում և Հվովում անցկացվեց ուկրաինա-հայկական գիտական երկրորդ սեսիան, որը նվիրված էր ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերին ու բարեկամությանը: Այդ սեսիայում երկու հանրապետության գիտնականները հանդես եկան 27 գիտական զեկուցումներով և հաղորդումներով, որոնք վերաբերում էին ուկրաինա-հայկական հարաբերությունների պատմության, զանազան հարցերին:

Ուկրաինական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը գիտական այդ նստաշրջանի նյութերը լույս է ընծայել առանձին ժողովածուով, որը նշանակալից քայլ է Ուկրաինայի և Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի, ինչպես և Ուկրաինայում հայկական գաղթախոսների պատմության հետ աղերսվող շուտամենասիրված կամ սակավ ուսումնասիրված հարցերի լուսարանման ասպարեզում:

Ժողովածուի հոդվածները հազեցված են արխիվային աղբյուրներից ի հայտ բերված փաստական հարուստ նյութով, ըստ որում բազմաթիվ փաստեր առաջին անգամ են մտցվում գիտական շրջանառության մեջ: Ժողովածուի մյուս արժանիքն այն է, որ հոդվածների հեղինակները մեծ ուշադրություն են նվիրում Ուկրաինայի և Հայաստանի միջև առկա սոցիալիստական հարաբերությունների և եղբայրական համագործակցության ուսումնասիրությանը:

Ժողովածուի նյութերը պերճախոս կերպով վկայում են այն արգասավոր համագործակցությունը, որ գոյություն ունի երկու եղբայրական հանրապետությունների պատմաբանների միջև պատմագիտության արդիական ու կարևոր պրոբլեմների լուսարանման բնագավառում: Եվ պատահական չէ, որ նրանց ուշադրությունը բեկուված է եղել քաղաքական տեսակետից այնպիսի կարևոր պրոբլեմի վրա, ինչպիսին է կոմունիզ-

մի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում ՍՍՀՄ ժողովուրդների, մասնավորապես, ուկրաինական և հայ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության զարգացումը: Եթե հայ պատմաբաններ Ա. Բ. Հարությունյանը և Կ. Բ. Ուդումյանը իրենց հոդվածում քննարկում են այդ համագործակցության ընդհանուր հարցերը, այդ թվում նաև երկու մայրաքաղաքների՝ Կիևի և Երևանի միջև սոցիալիստական մրցության զարգացման հարցը, ապա ուկրաինացի գիտնականներ Գ. Ի. Կովալչուկը և Պ. Պ. Սեմիլետովը, իրենց հերթին, հետազոտում են Հվովի շրջանի և հայկական հանրապետության տնտեսական կապերի կոնկրետ կողմերը:

Գրախոսվող ժողովածուի մեջ իրենց արտացոլում են գտել նաև երկու ժողովուրդների մշակութային կապերի ամրապնդման հարցերը: Ընդսրմին, ուկրաինական և հայ ժողովուրդների մշակութային կապերը դիտվում են նրանց պատմական պարզացման ենթահողի վրա:

Վ. Ե. Շուբրավսկին, օրինակ, իր հոդվածով լուսարանում է 1911 և 1914 թթ. Տարաս Շևչենկոյի հորեկյանների առթիվ հայկական հասարակայնության մեջ առաջացած արձագանքների հարցը: Հեղինակը իրավամբ ընդգծում է, որ Շևչենկոյի ստեղծագործության մեջ հայկական մշակույթի գործիչները (Ս. Սպանդարյանը, Ա. Խնկոյանը, Օ. Ազովյանը, Ա. Բաղդասարյանը) տեսել ու գնահատել են բոլոր աշխատավորների հոգուն հարազատ սոցիալական և ազգային ազատագրության համար պայքարի կոշող գաղափարները: Վ. Ե. Շուբրավսկին հատուկ ուշադրություն է նվիրում ուկրաինական մեծ բանաստեղծի ծննդյան հարյուրամյակի առթիվ Երվանդ Գարագաշի գրած «Տարաս Գրիգորևիչ Շևչենկո» սակավ հայտնի հոդվածի վերլուծությանը:

Ուկրաինական և հայ ժողովուրդների՝ սովետական ժամանակաշրջանի մշակութային կապերի ուսումնասիրությանն են նվիրված ուկրա-

ինացի գիտնականներ Գ. Մ. Շևչուկի և Ռ. Ֆ. Կիրշևի հոգովաձևերը: Երկու ժողովուրդների մշակութային համագործակցության օրինակով՝ Բ. Մ. Շևչուկը ցույց է տալիս միասնական համաժողովրդական կոմունիստական կուլտուրայի ձևավորման բարդ և ուշագրավ պրոցեսը, փաստական հարուստ նյութերի հիման վրա բացահայտում Ուկրաինայի ու Հայաստանի կուլտուրական կապերի ձևերն ու եղանակները:

Ավելի կոնկրետ խնդրի՝ Լվովի և Հայաստանի սովետական տարիների կուլտուրական կյանքի փաստերի քննարկմանն է նվիրված Ռ. Ֆ. Կիրշևի հոդվածը: Սովետական Հայաստանի քաղաքների ու Լվովի կուլտուրական սերտ կապերի մասին նրա բերած փաստական նյութերը հետաքրքրական են, անշուշտ, բնթերցող հասարակայնության լայն շրջանների համար:

Ուկրաինական և հայ ժողովուրդների պատմական կապերը բազմազան և բազմազեհ են: Ժողովածուի արժանիքներից մեկն էլ այն է, որ այդ կապերի բազմաձևությունը լրիվ արտացոլում է գտել նրա մեջ: Ա. Ն. Մնացականյանի հոդվածը պատմում է Կովկասում սովետական իշխանության հաղթանակի համար մղված քառամյա մարտերին Ուկրաինայի զավակների մասնակցության և նրանց սխրանքների մասին: Հեղինակը արժարժում է սովետական ինքնուրույն ազգային հանրապետություններ ստեղծելու համար մղված պայքարում ուկրաինական ու հայ ժողովուրդների փոխօգնության խնդիրը:

Ուկրաինական և հայ ժողովուրդների բարեկամությունն է՛լ ավելի ամրակուռ դարձավ և իր քննությունը բռնեց Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում, ինչպես և Ուկրաինայում ֆաշիստական դավթիչների դեմ ծավալված համաժողովրդական պարտիզանական շարժման ընթացքում:

Պատերազմի տարիներին Սովետական Միության ժողովուրդների մարտական համագործակցության պատմությունը և Ուկրաինայում ծավալված պարտիզանական շարժմանը հայերի մասնակցությունը լուսարանող հայ պատմաբաններ Ե. Մ. Խալեյանի և Ս. Վ. Խարմանդարյանի հոդվածները այդ առումով արժեքավոր են և ուշագրավ: Ս. Վ. Խարմանդարյանը իր հոդվածում ընդգծում է, որ պատերազմի տարիների ծանր պայմաններում սովետական ամբողջ ժողովուրդը, այդ թվում և հայ ժողովուրդը, իր անձնվեր աշխատանքով ու բարոյա-քաղաքական աջակցությամբ օգնեց ուկրաինացի եղբայրներին՝ գերմանական դավթիչների դեմ նրանց մղած պայքարում: Ե. Մ. Խալեյանի հոդվածը, կենդանացնելով Ուկրաինայում ծավալված պարտիզանական պատերազմի դրվագները և ցույց տալով այդ պատերազմին հայ ռազմիկների ու

առանձին հայկական պարտիզանական ջոկատների գործունե մասնակցությունը, բացահայտում է պարտիզանական պատերազմի համաժողովրդական և կամավոր բնույթը, հակառակ ամերիկյան պատմաբան Ջոն Արմստրոնգի 1964 թ. գրած այն ստահոգ պնդումների, թե իբրև պարտիզանական շարժումը հանդիսանում է ակամա դիմադրության կատարյալ մի նմուշ¹:

Ժողովածուում տեղ են գտել նաև ուշագրավ հոդվածներ՝ նվիրված միջնադարում եղած հայ-ուկրաինական պատմական կապերի և Ուկրաինայի հայկական գաղթավայրերի պատմությանը: Այս հոդվածները կարելի է բաժանել երեք խմբի: Հոդվածների առաջին խմբում լուսաբանվում են ուկրաինական և հայ ժողովուրդների քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի ամենատարբեր ասպարեզներում գոյություն ունեցած կապերը:

Սլավոնա-հայկական հարաբերությունների ամենավաղ շրջանին են նվիրված Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի և ուկրաինացի պատմաբան Մ. Յու. Բրայչևսկու բովանդակալից հոդվածները:

Ս. Տ. Երեմյանի «Повесть временных лет» երկի և Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» պատմա-աշխարհագրական որոշ զուգահեռների մասին» հոդվածի խորագիրն իսկ վկայում է, որ հեղինակը իր առջև միանգամայն կոնկրետ նպատակ է դնում՝ ցույց տալ միայն ֆոլկլորային այդ երկու ստեղծագործությունների պատմա-աշխարհագրական որոշ զուգահեռները: Պատմա-աշխարհագրական և լեզվաբանական տվյալների մանրակրկիտ վերլուծության շնորհիվ հոդվածի հեղինակը հանգում է այն ճիշտ եզրակացության, որ և՛ ռուսական, և՛ հայկական ասքերը ծագել են գոյություն ունեցող տեղագրական անվանումների ժողովրդական մեկնաբանության հողի վրա: Ս. Տ. Երեմյանը արդարացիորեն ժխտում է այդ ստեղծագործությունների հիմնական բնագրերի համանմանությունը:

Մինչդեռ Մ. Յու. Բրայչևսկին իր ինքնատիպ և զրավիչ հոդվածում ճիշտ հակառակ կարծիքն է հայտնում: «Հին ռուսական ավանդության հետ անկասկածելի զուգորդությունները (ասոցիացիաները), — գրում է նա, — հայկական առասպելին տալիս են ավելի լայն սյուժետային ֆոն» (էջ 66): Հեղինակը հարուցում է հին ռուսական առասպելի հետքերը VIII դարի հայկական աղ-

¹ Քաղվածքը բերվում է ըստ Ա. Ա. Կուրնասովի և Ե. Ս. Լագուտինի «Ինչպես և ինչու է Պենտագոնը ուսումնասիրում սովետական պարտիզանական շարժման փորձը» հոդվածի (История СССР, 1965, № 4, էջ 174):

քյուրի մեջ որոնելու հարցը և այդ կապակցությամբ խոսում է տակավին Կիևյան պետության կազմավորումից առաջ հայ-սլավոնական կասյերի գոյության մասին: Սակայն այն փաստարկները, որ բերում է հեղինակը ուսական վերոհիշյալ երկի և «Տարոնի պատմության» հիմնական բնագրերի համանմանության օգտին, համոզիչ չեն: Ուստի և, չժխտելով հայ-սլավոնական վաղ կապերի առկայության փաստը, կարելի է համաձայնել Ս. Տ. Երեմյանի հետևյալ մտքին. «Հազիվ թե Կիևո-պեչորյան մենաստանում նստած տարեգիրը այնպես լավ գիտենար կամ ընդհանրապես գիտենար «Տարոնի պատմություն»-ը, որ անվանումների ձևերը ըստ ժողովրդական մեկնության զուգորդվեն հայկական առասպելի հերոսների անունների հետ: Նույնը կարելի է ասել նաև հայ պատմիչի մասին, քանի որ նա կարող էր ապրել այն ժամանակաշրջանում, երբ Կիևը նոր էր միայն երևան գալիս և չէր կարող ուշադրություն գրավել» (էջ 160):

XV—XVIII դդ. արևմտաուկրաինական հողերում հայ-ուկրաինական կապերի հարցին է ներվիրված ուկրաինացի գիտնական Յա. Ի. Իսակիչի հոդվածը: Փաստական նյութի հիման վրա հոդվածում ցույց են տրվում հայ վերաբնակիչների և ուկրաինացիների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերությունները, բացահայտվում նրանց տնտեսական կապերը, հայ և ուկրաինացի համքարային արհեստավորության համատեղ պայքարը ընդդեմ ֆեոդալական սահմանափակումների, ինչպես և ուկրաինացիների ու հայերի փոխադարձ հետաքրքրությունը երկու ժողովուրդների մշակութային ժառանգության նկատմամբ:

Ի. Գ. Շուլցի հոդվածում իրենց մեկնաբանությունն են գտել Հայաստանի և Անդրկարպատների պատմական կապերը անցյալում և ներկայումս:

Երկրորդ խմբին պատկանում են այն հոդվածները, որոնք վերաբերում են Ուկրաինայի հայկական բնակավայրերի պատմությանը: Այդ հոդվածների հիմնական մասում լուսաբանվում են Լվովի հայկական գաղութի կյանքի տարբեր կողմերը: Թեև Լվովը հանդիսանում էր խոշոր հայկական գաղութ արևմտաուկրաինական հողում, այնուամենայնիվ, նրա հիմնադրման և նախնական զարգացման հարցերը բավարար չեն ուսումնասիրված պատմական գրականության մեջ: Այս հարցին է նվիրված Ուկրաինական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ի. Պ. Կրիպյակևիչի հոդվածը: Նա գտնում է, որ հայերը հաստատվել են Լվովում դեռևս Գալիցիա-Վոլինյան իշխանության ժամանակ, XIII դարում, և ևս իշխանության օրոք, երբ հիմնադրվել է նաև քաղաքը:

Հեղինակի բերած փաստերը վկայում են, որ արդեն այդ ժամանակ հայերը Լվովում ունեն իրենց իրավաբանորեն կազմակերպված գաղութը: Փաստերի հիման վրա Ի. Պ. Կրիպյակևիչը հանգում է այն եզրակացության, որ հայերը այստեղ բարձր մակարդակի հասցրեցին քաղաքային բազմաթիվ արհեստներ, մեծ փառք վաստակելով իրենց գործունեությամբ: Արևելքի հետ Լվովի առևտրական հարաբերությունների մեջ հանդես գալով որպես միջնորդներ, նրանք կարողացան քաղաքը մատակարարել արևելյան բազմապիսի հազվագյուտ ապրանքներով: Իրենց աշխատանքով և նախաձեռնությամբ հայերը կարողացան արժանավոր տեղ նվաճել Լվովի պատմության մեջ:

XVII դարի առաջին կեսին արևմտաուկրաինական հողերում, առևտրի զարգացման գործում Լվովի հայ գաղութի ունեցած դերին է նվիրված Ն. Կ. Կրիվոնոսի հոդվածը, ուր առաջին անգամ պիտական շրջանառության մեջ են դրվել մեծ քանակությամբ փաստական նյութեր, որոնք վերաբերում են լեհահայերի առևտրական գործունեությանը:

Լվովի հայերը միայն առևտրով չէին զբաղվում: Հայ բնակչության 30—40 տոկոսը ըզրադվում էր արհեստով: XV—XVII դդ. Լվովի արհեստագործության մեջ հայերի ունեցած մասնակցության մասին է պատմում Ա. Պ. Կիսը իր հոդվածում: Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս, որ շնայած բազմապիսի արգելքներին և համքարային սահմանափակումներին, այնուամենայնիվ, հայ վարպետների պատրաստած իրերը տարվում էին արտասահման՝ Մոլդավիա, Հունգարիա, Ռուսաստան: Լվովում հայտնի էին հայ մուշտակագործները, սեկագործները, ոսկերիչները, կազմարարները, նկարիչները, փորագրողները և ուրիշներ:

Ժողովածուում արտացոլում է գտել նաև Լվովի հայերի պայքարը Վատիկանի դեմ՝ ունիայի հաղթում: Բուրժուական պատմագրությունը չանում էր նենգափոխել ունիայի բռնի անցկացման պատմությունը, համարելով այն մեծագույն բարիք հայ ժողովրդի համար: Ոչ մեծ հոդվածի շրջանակներում Ս. Տ. Բիլեցկին, հակառակ այն հեղինակների, որոնք ունիայի անցկացման պատմությունը դիտում են որպես երկու կրոնական ուղղությունների պայքար, բացահայտել է այդ պայքարի սոցիալական բովանդակությունը, ցույց տալով, որ հարուստ վաճառականները և վաշխառուները, որոնց հիմնական նպատակն էր իրենց տնտեսական առանձնաշնորհումների պահպանումը, չէին մասնակցում Լվովի հայկական գաղութի բնակչության պայքարին և

նույնիսկ հարուստ հայերի մի մասը, վախենա-

լով կորցնել իր իրավունքները, ընդունեց ունիան։
Ս. Տ. Բիլեցկու հողվածի արժանիքներից մեկն էլ այն է, որ նա ցույց է տալիս ունիայի հարցում հայերի և ուկրաինացիների համատեղ պայքարը, նրանց բարեկամական հարաբերությունների ամրապնդումը հանուն ազգային ինքնուրույնության պաշպանման։

Հայ և ուկրաինական ժողովուրդների պատմական կապերի ուսումնասիրման զործում մեծ հետաքրքրություն է ներկայացնում այնպիսի հարց, ինչպիսին է Գոշի Դատաստանագրքի իրավական նորմաների կիրառումը Լվովում և տարբեր սոցիալական խմբավորումների ներկայացուցիչների իրավիճակի որոշումը։ Այս հարցը քննարկված է Վ. Ս. Կուլչիցկու հողվածում։

Հայ մշակույթի ներկայացուցիչներից մեկի՝ Ստեփանոս Լվովցու կյանքի և փիլիսոփայական հայացքների ուսումնասիրմանն է նվիրված ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Վ. Կ. Զալոյանի հողվածը։

Գրախոսվող ժողովածուի մեջ տեղ են գտել նաև այնպիսի հողվածներ, որոնք վերաբերում են Ուկրաինայի տերիտորիայում եղած մյուս հայկական գաղութներին։

Վ. Բ. Գրարովեցկու հողվածում լուսարանված է հայկական գաղութի պատմությունը հնադարյան Սնյատին քաղաքում, որը գտնվում էր կարևոր առևտրական ճանապարհների խաչմերուկում և սահմանակից էր Գալիցիային ու Մոլդավիային։ XV—XVII դդ. առաջին կեսին Կիևի հայկական կյանքի պատմությանն է նվիրված Դ. Ի. Միշկոյի հողվածը։ Երկու հեղինակներն էլ արխիվային փաստաթղթերի հիման վրա ներկայացնում են հայերի կյանքը հիշատակված քաղաքներում, ցույց են տալիս հայերի իրավական վիճակը, նրանց աշխատանքային զործունեությունը, սոցիալական բաժանումները և ունեցվածքային շերտավորումը հայկական բնակավայրերում, հայ և ուկրաինացի բնակչության միատեղ պայքարը կաթոլիկ հոգևորականության դեմ, ինչպես նաև նրանց միջև հաստատված սերտ բարեկամական կապերը։

Բոլորովին նոր և մինչև այժմ պատմագրության մեջ չլուսարանված հարցի է նվիրված Ֆ.

Շևչենկոյի XVII—XVIII դդ. ուկրաինական կաղական զորքի մեջ հայերի մասնակցության վերաբերյալ հողվածը։

Հետաքրքիր հարցեր են առաջադրված Վ. Ռ. Գրիգորյանի «Արևմտյան Ուկրաինայի հայկական գաղութների «կտրիճվորաց եղբայրությունների» մասին» հողվածում։ Հայկական աղբյուրների հիման վրա հեղինակը ցույց է տալիս «կտրիճների եղբայրության» ակունքներն ու զարգացումը, ընդհանուր գծերով լուսարանելով նրանց զործունեությունը։

Ղրիմի հայկական բնակավայրերի առաջացման պատմությանն է նվիրված Վ. Ա. Միքայելյանի հողվածը։ Բազմաթիվ փաստաթղթերի և տապանագրային աղբյուրների հիման վրա հեղինակը հանգում է այն եզրակացության, որ սկսած XI դարից Ղրիմի թերակղզում և հակապես նրա ծովափնյա շրջաններում հիմնվեց հայկական գաղութ՝ ստվար բնակչությամբ, որը XIV դարի 30-ական թթ. լրացվեց հայ գաղթականների նոր հոսքով և XIV—XV դդ. մինչև այժմ չտեսնված տնտեսական և մշակութային վերելք ապրեց։

Հողվածների վերջին խմբի մեջ (Լ. Մելիքսեթ-Բեկ, Վ. Հակոբյան, Յա. Դաշկևիչ, Ռ. Վոադիչ մտնում են աղբյուրագիտական և բիրիդորաֆիական նյութերը, որոնք շատ հետաքրքիր են և, որ կարևոր է, ներկայացնում են մեծ արժեք ինչպես ուկրաինացի, այնպես էլ հայ հետազոտողների համար։

Ցանկալի է, որ առաջիկայում հայ-ուկրաինական թեմատիկայով զբաղվող հեղինակները աչելի մեծ ուշադրություն դարձնեն արխիվային նյութերի բացահայտմանը և լուսարանեն ընդհանրական բնույթի թեմաները։ Այդ բանի համար անհրաժեշտ է հետազա ավելի սերտ համագործակցություն Ուկրաինայի և Հայաստանի պատմաբանների միջև։ Եվ անկասկած է, որ ժողովածուն կծառայի հայ-ուկրաինական գիտական կապերի ամրապնդմանը և երկու բարեկամ ժողովուրդների հետազա բազմակողմանի հարաբերությունների զարգացմանը։

Ջ. ԳԱԼՍՅԱՆ

Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ, Հաղորդի բարբառը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1965, 371 էջ, գինը 1 ռ. 30 կ.:

Հայերենի բարբառները, որոնք անհետացման ճանապարհին են գտնվում, շատ նյութ կարող են տալ հայոց լեզվի պատմության տարբեր հարցերի լուսարանման համար, ուստի նրանց

ուսումնասիրումը հայ լեզվաբանության կարևոր ու անհետանգելի խնդիրներից է։ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը զգալի աշխատանք է կատարել և շարունակում է կատարել հայե-